ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

09 սեպտեմբերի 2011 թվական N 123-Ա

ք.Հրազդան

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 108-Ն որոշման 1-ին կետի 6) ենթակետի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանին հատկացված գումարների հաշվին քաղաք Չարենցավանի ներթաղամասային փողոցների ասֆալտապատման աշխատանքների վերջնական ընդունման և հետագա շահագործման նպատակով Չարենցավան համայնքին հանձնելու համար՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել շինարարական աշխատանքների ընդունող և շահագործման հանձնող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Վ. Բակլաչյան	հանձնաժողովի նախագահ	- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ
Ս. Հակոբյան	անդամ	- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Ս. Սաֆարյան	անդամ	- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ
Ս. Ղալթախչյան	անդամ	- տեխնիկական հսկողությունն իրականացնող «Սահմանաշեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Ռ.Առաքելյան	անդամ	- հեղինակային հսկողություն իրականացնող «Նիգոուբշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Գ.Հովհաննիսյան	անդամ	- օբյեկտի կապալառու կազմակերպության՝ «Կոտայքի ՃՇՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Հ.Շահգալդյան	անդամ	- շահագործման ընդունող Չարենցավան համայնքի ներկայացուցիչ (համաձայնությամբ)

2. Հանձնաժողովին՝ տեղերում ուսումնասիրել կատարված աշխատանքների համապատասխանությունը նախագծա-նախահաշվային փաստաթղթերին ու շինարարական նորմերին և համապատասխան ակտը ներկայացնել 10 օրյա ժամկետում:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ